



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ  
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
REPUBLIC OF ARMENIA  
MINISTRY OF LABOR AND SOCIAL ISSUES

«ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ  
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ  
ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՊՈԱԿ

«NATIONAL INSTITUTE OF LABOUR AND  
SOCIAL RESEARCHES»



ԱՄՆ ՄԶԳ ՀԱՅԱՍՏԱՆ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ  
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՍՎԱԿԱՐԳԵՐԻ  
ՀԶՈՐԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

USAID ARMENIA, SOCIAL PROTECTION  
SYSTEMS STRENGTHENING PROJECT

## Մամլո հաղորդակցություն # 14

20 հունիսի 2008թ. ՀՀ, ք.Երևան

### Սոցիալական պաշտպանության համակարգերի հզորացման ծրագիրն օժանդակում է Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտի զարգացման գործընթացին

Հաշվի առնելով ԱՄՆ ՄԶԳ-ի զգալի օժանդակությունը Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտի վերանորոգման գործում՝ ԱՄՆ ՄԶԳ Հայաստանի տնօրեն Ռոբին Ֆիլլիփսը այսօր ներկա է եղել Ինստիտուտի վերաբացմանը: Իրենց ելույթներում ինչպես ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Արսեն Համբարձումյանը, այնպես էլ ԱՄՆ ՄԶԳ Հայաստանի տնօրենը կարևորել են Հայաստանի սոցիալական պաշտպանության համակարգում առկա բարեփոխումները, որոնք տեսանելիորեն առկա են միջազգային չափանիշներին համապատասխանող՝ արդիականացված ազգային ինստիտուտի օրինակով: Նրանք նաև կարևորել են Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտի դերը ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համակարգում, նշել, որ այսօր այն ի վիճակի է դառնալու Նախարարության «ուղեղը» սոցիալական քաղաքականության ձևավորման և տեղում իրականացվող գիտամեթոդական հետազոտությունների հարցում:

ԱՄՆ ՄԶԳ Սոցիալական պաշտպանության համակարգերի հզորացման ծրագիրը (ՄՊՀՀԾ), որն իրականացվում է «AECOM» միջազգային զարգացման կազմակերպության կողմից ներկայումս Հայաստանում գրանցված որպես «Սըրվիսիզ Գրուպ ինք.», նպատակ է հետապնդում հզորացնել Հայաստանի սոցիալական պաշտպանության համակարգերը և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կարողությունները:

Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտը ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համակարգում գործող՝ պետական ոչ առևտրային կազմակերպություն է, որի հիմնական նպատակն է աշխատանքի և

սոցիալական պաշտպանության բնագավառում գիտահետազոտական գործունեության իրականացումն ու սոցիալական պաշտպանության ոլորտի մասնագետների վերապատրաստումը:

ՍՊՀՀԾ-ն ինստիտուտի հետ համագործակցում է ծրագրի գործունեության սկզբից՝ մի շարք դասընթացներ կազմակերպելով ինստիտուտի և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակիցների և մասնավոր սեկտորի ներկայացուցիչների համար: Ներկայումս ՍՊՀՀԾ-ն օժանդակում է ինստիտուտին՝ դասընթացների մոդուլների մշակման և հետազոտությունների գործընթացում ներգրավված աշխատակիցների ներուժի հզորացման գործում, նպաստելով կադրերի հմտությունների զարգացմանն այնպիսի գործառույթների իրականացման գործում, ինչպիսիք են աշխատողների անվտանգության և առողջության պահպանումը, զենդեբային և իրավական ակտերի մշակումը և այլն:

Վերջին յոթ ամիսների ընթացքում ՍՊՀՀԾ-ն շուրջ 275,000 ԱՄՆ դոլարին համարժեք օժանդակություն է տրամադրել Ինստիտուտի վերանորոգման աշխատանքների իրականացման համար. հիմնանորոգվել է Ինստիտուտի կողմից զբաղեցվող տարածքը (շենքի 3-րդ և 4-րդ հարկերը), կատարվել են հատակագծային փոփոխություններ, ներքին հարդարման աշխատանքներ : Բացի ինստիտուտի ներքին տարածքից վերանորոգվել է նաև շենքի տանիքը, մասնակիորեն վերանորոգվել են ՀՀ զբաղվածության ծառայություն գործակալության տարածքն ու շենքի աստիճանները: Շենքի ջեռուցումն ապահովվելու նպատակով կառուցվել է առանձին կաթսայատուն (բակային մասում), մոնտաժվել է շուրջ 260 մ. երկարությամբ գազատար, ներքին և արտաքին ջերմային նոր ցանց:

ՍՊՀՀԾ-ի օժանդակությամբ Ինստիտուտի լսարաններից մեկը, ռեսուրսների և հետազոտությունների կենտրոնն ու գրադարանը, ինչպես նաև 3 բաժիններ ներառող աշխատասենյակը կահավորվել են կահույքով, համակարգիչներով և պրոեկտորով: